

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն № )

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**

**I. Ը ն դ հ ա ն ու ր դ ր ու յ թ ն ե ր**

- 1.<<Հայաստանի ազգային ազրարային համալսարան>> հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհուրդը ձևավորվում է Համալսարանի կանոնադրության 44 կետի պահանջներին համապատասխան և լուծում է ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության կազմակերպման և կառավարման հիմնախնդիրները:
2. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է՝ այդ ընթացքում անդամների մասնակի շրջափոխման հնարավորությամբ: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:
3. Համալսարանի գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, դեպարտամենտների ղեկավարները (պետերը), մասնաճյուղերի տնօրենները, գիտական քարտուղարը, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրենը, գիտական կենտրոնի տնօրենը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները, գրադարանի տնօրենը (կամ վարիչը), արհմիութենական կազմակերպության նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ռեկտորի նշանակմամբ, կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարներ, համալսարանի առանձին դասախոսներ և գիտաշխատողներ, հանրապետության կրթության և գիտության առաջատար մասնագետներ: Ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող

գերազանցել գիտական խորհրդի թվակազմի 50 տոկոսը: Համալսարանի ուսանողության ներկայացուցիչների թիվը չի կարող պակաս լինել գիտական խորհրդի թվակազմի 25 տոկոսից:

4. Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են Համալսարանի կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի:
5. Համալսարանի Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ գաղտնի քվեարկության մասին:

## II. Գիտական խորհրդի խնդիրներն ու իրավասությունները

6. Համալսարանի Գիտական խորհուրդը՝

- հաստատում է իր կանոնակարգն ու աշխատակարգը.
- քննարկում և ռեկտորի ու հոգաբարձուների խորհրդին առաջարկներ է ներկայացնում համալսարանի ուսումնական, գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունների, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի ու ծրագրերի, գիտական կադրերի պատրաստման, միջազգային կրթական, գիտական համագործակցության հարցերի և ծրագրերի վերաբերյալ.
- քննարկում և առաջարկություններ է ներկայացնում նոր ստորաբաժանումներ ստեղծելու մասին, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը:
- քննարկում և հրատարակության է երաշխավորում Համալսարանի աշխատողների ու տվյալ մասնագիտությամբ կազմակերպություններում աշխատող այլ հեղինակների մենագրությունները, ժողովածուները և այլն.
- քննարկում է կրթության և գիտության զարգացման հրատապ հիմնահարցերը, լսում գիտական հաղորդումներ և ընդունում համապատասխան որոշումներ.
- հիմնադրամի և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ հաստատում է ուսումնական պլանները՝ ըստ մասնագիտությունների.
- քննարկում է ուսումնական գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում է հաշվետվություններ և հաղորդումներ՝ կատարվող

կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

- ընդունում է որոշում նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու մասին և ներկայացնում այն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը.

- ընդունում է <<Համալսարանի պատվավոր դոկտոր>>, <<Համալսարանի պատվավոր պրոֆեսոր>>, <<Համալսարանի վաստակավոր պրոֆեսոր>>, <<Համալսարանի վաստակավոր գիտաշխատող>> կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, հուշամեդալով պարգևատրելու մասին որոշումներ: Քննարկում և հաստատում է դեկանների, դեպարտամենտների պետերի, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգերը: Իրականացնում է դեկանների, դեպարտամենտների պետերի, ամբիոնների վարիչների ու պրոֆեսորների ընտրությունը՝ փակ գաղտնի քվեարկությամբ: Սահմանված կարգով շնորհում է դոցենտի և պրոֆեսորի կոչումներ.

- իրականացնում է սույն կանոնակարգից բխող՝ ուսումնական, մեթոդական և հետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

7. Գիտական խորհրդի նախագահը՝

7.1. նախագահում է գիտխորհրդի նիստերում,

7.2. վավերացնում է գիտխորհրդի ընդունված որոշումները,

8. Գիտական խորհրդի նախագահի տեղակալը.

8.1. նախապատրաստում է գիտխորհրդի աշխատանքային պլանը և Գիտխորհրդի նիստերի օրակարգային հարցերը,

8.2. կատարում է Գիտական խորհրդի նախագահի պարտականությունները նրա բացակայության դեպքում:

9. Գիտական խորհրդի քարտուղարը համալսարանի գիտական քարտուղարն է:

9.1. գիտական խորհրդի քարտուղարը նշանակվում է ռեկտորի հրամանով,

9.2. նախապատրաստում է գիտխորհրդի նիստերի օրակարգերը,

9.3. կազմում և պահպանում է գիտխորհրդի նիստերի արձանագրություններն ու որոշումները,

9.4. համակարգում է գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների աշխատանքները,

10. Գիտական խորհրդի անդամը.

10.1. մասնակցում է գիտխորհրդի հերթական և արտահերթ նիստերին ու նրա այն մարմինների աշխատանքներին, որոնցում ընդգրկված է;

10.2. հանդես է գալիս առաջարկություններով, նպաստում է գիտխորհրդի արդյունավետ աշխատանքին;

10.3. կատարում է գիտխորհրդի որոշումները, ինչպես նաև գիտխորհրդի նախագահի հանձնարարությունները;

10.4. նիստերին չմասնակցելու դեպքում նախապես տեղեկացնում է գիտխորհրդի քարտուղարին, հայտնելով չներկայանալու պատճառը;

10.5. իրավասու է ստանալու Համալսարանի ցանկացած մարմնից և ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկություններ գիտխորհրդի իրավասության սահմաններում քննարկվող հարցերի վերաբերյալ;

10.6. նախապատրաստում է հարցերի քննարկումը և անում է առաջարկություններ ընդունվող որոշումների վերաբերյալ;

10.7. մասնակցում է կրթահամալիրների և ֆակուլտետների գիտխորհրդների նիստերին և ներկայացնում է առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ;

10.8. մասնակցում է գիտխորհրդի այլ հանձնախմբերի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով:

11. Գիտական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են.

11.1. գիտխորհրդի ի պաշտոնե անդամի լիազորությունները դադարեցվում է տվյալ պաշտոնում պաշտոնավարումը ավարտելու օրվանից;

11.2. գիտխորհրդի նշանակովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

12. Գիտխորհրդի ընտրովի անդամը ընտրվում է Համալսարանի կառուցվածքային (խորհրդի) համապատասխան ստորաբաժանման կողմից, փակ (գաղտնի) քվեարկությամբ և վավերացվում է ռեկտորի հրամանով, սահմանված կարգով :

12.1. Գիտխորհրդի ընտրովի անդամի լիազորությունները դադարեցվում են գիտական խորհրդի լիազորությունների գործունեության ժամկետի ավարտին, եթե տվյալ անդամի մասին մինչ այդ Գիտխորհրդի այլ որոշում չի կայացվել;

12.2. Գիտխորհրդի ընտրովի անդամի թափուր տեղերը լրացվում են այն

ստորաբաժանումների կողմից, որոնց ներկայացուցիչները դուրս են եկել

Գիտխորհրդի կազմից:

13. Գիտխորհրդի անդամը հրաժարական տալու համար դիմում է Համալսարանի ռեկտորին: Հրաժարականը ուժի մեջ է մտնում դիմումը տալու պահից, եթե նրա մեջ ավելի ուշ ժամկետ չի նշված:

### III Գիտական խորհրդի աշխատակարգը

14. Գիտխորհրդի նիստերն անցկացվում են ամիսը մեկ անգամ: Նիստերի անցկացման վայրը և ժամկետը որոշում է գիտխորհրդի նախագահը:
15. Հրատապ հարցերի քննարկման համար արտահերթ նիստ կարող է հրավիրվել գիտխորհրդի նախագահի որոշմամբ կամ գիտխորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ/երրորդի նախաձեռնությամբ: Այդ մասին նրանք գրավոր առաջարկություն են ներկայացնում գիտխորհրդի նախագահին, նշելով այն հարցերը, որոնց համար առաջարկվում է հրավիրել արտահերթ նիստ:
- Գիտխորհրդի նախագահը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում արտահերթ նիստի ժամկետի մասին: Արտահերթ նիստ անցկացնելու մասին գիտխորհրդի անդամն անձնապես տեղեկացվում են նիստից առնվազն 1 օր առաջ:
16. Յուրաքանչյուր նիստի օրակարգի նախագիծը հաստատվում է գիտխորհրդի նիստի սկզբում, որի վերաբերյալ ընդունվում է որոշում:
17. Օրակարգի մասին առաջարկություն ներկայացնող անձն իրավունք ունի իր նախաձեռնությունը հետ վերցնելու, որի դեպքում այն չի քննարկվում:
18. Օրակարգից դուրս քննարկվում են միայն աշխատակարգի, քվեարկության վերաբերյալ կարևոր տեղեկություններ, հաղորդումներն պարունակող այլ հարցեր:
19. Օրակարգային հարցի քննարկումը սկսվում է հարցը նախապատրաստողի զեկուցումով: Գիտխորհուրդը նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ սահմանում է տվյալ հարցի քննարկման տևողությունը և կարգը:
20. Կարծիքների արտահայտման հերթականությունը հետևյալն է՝ դիտողություն աշխատակարգի վերաբերյալ, հարցեր զեկուցողին, ելույթ:
21. Նիստի նախագահողը մտքերի փոխանակությանը մասնակցելու համար ձայնը տալիս է ըստ հայտերի ստացման հերթականության: Անհրաժեշտության դեպքում

նա կարող է փոխել ելույթների հերթականությունը՝ հայտարարելով այդ փոփոխությունների պատճառները:

Եթե մտքերի փոխանակությանը մասնակցողի հայտարարությունը առնչություն չունի քննարկվող հարցի հետ, կամ եթե նիստի նախագահողը գտնում է, որ գիտխորհուրդը ստացել է տեղեկատվություն քննարկվող հարցի վերաբերյալ, նա կարող է խնդրել ելույթ ունեցողին ավարտել ելույթը:

Քննարկման շահերից ելնելով՝ նիստի նախագահողը գիտխորհրդի համաձայնությամբ կարող է թույլ տալ ելույթ ունեցողին շարունակել ելույթը տրված ժամանակից ավելի:

22. Մտքերի փոխանակությունը դադարեցվում է նիստի նախագահողի առաջարկությամբ և նիստի ներկա անդամների որոշմամբ, որն ընդունվում է բաց քվեարկությամբ, նրանց ձայների պարզ մեծամասնությամբ:
23. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ գիտխորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկությունը կարող է անցկացվել առանց ձայները հաշվելու, եթե տարակարծություն չկա: Նախագահողը բարձրաձայն հայտարարում է քվեարկության արդյունքները՝ շեշտելով առաջարկության ընդունումը կամ մերժումը:
24. Պաշտոնակալման մրցույթներ, կոչումների շնորհում, անհատական առաջադրումներ իրականացնելիս թեկնածուների վերաբերյալ ընդունվում են փակ (զաղտնի) քվեարկությամբ, գիտական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
25. Գիտխորհրդի նիստը կարող է հետաձգվել, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
26. Գիտխորհրդի նիստի օրակարգը կազմվում է համաձայն Համալսարանի գիտխորհրդի կողմից հաստատված՝ գիտխորհրդի աշխատանքային պլանի, նախորդ նիստերից մնացած հարցերի և գիտխորհրդի անդամներից օրակարգի վերաբերյալ ստացած գրավոր առաջարկությունների, որոնք ներկայացվում են գիտխորհրդի քարտուղարին, նիստերից առնվազն 7 օր առաջ: Նիստի օրակարգի հարցերի հերթականությունը որոշում է գիտխորհրդի նախագահը:

27. Գիտխորհրդի ընդունված որոշումներն ուժի մեջ են մտնում Համալսարանի ռեկտորի կողմից մեկշաբաթյա ժամկետում վավերացնելուց կամ հրամանագրվելուց հետո:

28. Գիտխորհրդի նիստն արձանագրվում է: Արձանագրությունները ստորագրվում են գիտխորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

29. Չվավերացված որոշումները վերադարձվում են գիտխորհրդին՝ լրացուցիչ քննարկումների և համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Կրկնակի անգամ չվավերացված որոշումները տեղափոխվում են խորհուրդ, որի ընդունած որոշումը համարվում է վերջնական:

### **ԵԶՐԱՓՍԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

30. Սույն կանոնակարգի և աշխատակարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են գիտխորհրդի որոշմամբ:

**Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդում**